В гностицизме центральное место занимает учение о спасении души. Душа, попавшая в материальное тело, обречена на страдания. Спасение души достигается через познание истинных богов и отказ от материального мира.

УПАДОНС, ДЕКЛАМАЦИЯ - (лат. declamatio): произнесение художественных произведений вслух. Является интерпретацией текста.

УПАДОНС - (лат. declamatio): произнесение художественных произведений вслух. Является интерпретацией текста.

ДЕКОНСТРУКТИВИЗМ – (англ. deconstruction – разрушение, разбор): литературоведческая разработка теории постструктурализма, выступает как теория литературы (Ж. Деррида, П. де Ман, Х. Блум, Дж. Хартман). Наиболее влиятельное направление современной литературной критики. Свое название получил по основному принципу анализа текста – “деконструкции”, смысл которого заключается в выявлении внутренней противоречивости текста, в обнаружении в нем скрытых и незамечаемых не только “неискушенным” читателем, но и ускользающих от самого автора “остаточных смыслов”.

“ДЕРЕВЕНСКАЯ ПРОЗА” – одно из ведущих направлений русской литературы второй половины XX в. Характерна специфическая типология героя, позволяющая выделить образы “хранителей древностей” и образы “вольных людей” – героев, во многом живущих наперекор общепринятым нормам, вразрез с традиционными крестьянскими устоями. Писатели деревенщики внесли свой вклад в модификацию канонических жанров оды, пасторали, сказки, романа (В. Овечкин “Районные будни”, А. Солженицын “Захар Калита”, В. Шукшин “Калина красная”, В. Астафьев “Пастух и пастушка”, В. Распутин “Прощание с Матерой” и др.).

ԴԵԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎԻԶՄ - (անգլ. deconstruction – քայքայում). պոստ-ստրուկտուրալիզմի տեսության գրականագիտական մշակում, հանդես է գալիս որպես գրականության տեսություն (ժ. Դերրիդա, Պ. դե Ման, Խ. Բլում, Ջ. Հարտման): ժամանակակից գրական քննադատության ամենաազդեցիկ ուղղություն: Իր անունն ստացել է բնագրի վերլուծության հիմնական սկզբունքի հիման վրա, որի իմաստը կայանում է բնագրի ներքին հակասությունների բացահայտումը, նրանում ոչ միայն անփորձ ընթերցողների չնկատած երանգների հայտնագործումը, այլև իր իսկ՝ հեղինակի կողմից սարդված “մնացորդային իմաստը”:

“ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱՐՉԱԿ” – XX դարի երկրորդ կեսի ռուսական, ինչպես նաև հայ գրականության առաջատար ուղղություններից մեկը: Նրան հատուկ է հերոսի առանձնահատուկ տիպաբանությունը, որ հնարավորություն է ընձեռում ստեղծելու “անցյալի պահպանողների” և “ազատ մարդկանց” կերպարներ՝ հերոսներ, որոնք շատ բաներում հակադիր են ընդհանուրի կողմից ընդունված նորմերին, հակասում են գյուղացիական որոշ շերտերի սովորություններին: Գյուղացիները իրենց նպաստն են ներդրել ներբողի, հովվերգության, հեքիաթի, վեպի սահմանված ժանրերի վերափոխման ընթացքին (Յ. Ծուղուրյան “Մոռացված աշխարհ”, Յ. Մաթևոսյան “Մենք ենք, մեր սարերը”, “Աշնան արևը”):

ДЕТАЛЬ ХУДОЖЕСТВЕННАЯ – (франц. detail – подробность): составной элемент литературного описания, одно из средств создания образа; выделенная автором выразительная подробность в произведении (в обстановке, пейзаже, интерьере, портрете, речи и пр.), несущая значительную смысловую и эмоциональную нагрузку.

ДЕТЕКТИВНАЯ ЛИТЕРАТУРА – (англ. detective – сыщик, от лат. detectio – раскрытие): вид художественной литературы, в которой усложненный сюжет обычно построен или на логическом раскрытии загадочного преступления, или на детальном выяснении таинственных и странных обстоятельств, связанных с судьбами героев.

ДЕТСКАЯ ЛИТЕРАТУРА – художественная литература для детей и юношества как часть общей литературы, включающая в себя: произведения, адресованные читателям младшего, подросткового или юношеского возраста, произведения, вошедшие в круг детского и юношеского чтения, а также творчество самих детей.

ДИАЛОГ – (греч. dialogos – разговор, беседа): вид устной речи, разговор двух или более лиц. В литературном произведении одна из основных форм речевой характеристики персонажей, наряду с монологом.

ԴԵՏԱԼ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ - (ֆր. detail – մանրամասն). ստեղծագործության մեջ արտահայտչական, պատկերման միջոց է, որը իմաստային և գաղափարական-հուզական ծանրաբեռնվածություն է կրում:

ԴԵՏԵԿՏԻՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ - (անգլ. detect – բացահայտում). գեղարվեստական գրականության ժանրերից մեկը, որը աչքի է ընկնում սյուժետային բազմազան գծերով, սուր հակասություններով ու բախումներով, սրընթաց կերպով զարգացող դեպքերով, որոնք ավարտվում են բոլոր խճճված հանգույցների լուծմամբ:

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ - երեխաների և պատանիների համար նախատեսված գեղարվեստական ստեղծագործություններ: Արժարժում են կյանքի այնպիսի հարցեր, որոնք հետաքրքրում են տվյալ տարիքի երեխաներին և մեկնաբանվում նրանց զարգացմանը համապատասխան գեղարվեստական ձևով:

ԵՐԿԻՍՈՒԹՅՈՒՆ, ԴԻԱԼՈԳ - (հուն. dialogos – խոսակցություն երկու հոգու միջև). գեղարվեստական երկի կառուցվածքի բաղադրամասերից մեկը, գրույց, խոսակցություն մեկից ավելի գործող անձանց միջև: Մենախոսության հետ մեկտեղ դառնում է կերպարների տիպականացման ու անհատականացման, գործողությունների զարգացման եղանակ:

ДИВАН - (перс. - запись, книга): 1). двух- (бейт) или четырехстрочное (рубай) стихотворение в восточной поэзии, состоящее из 15 (8+7) слогов. 2). В классических литературах Востока сборник стихов, расположенных строго по жанрам и в алфавитном порядке рифм.

ДИДАКТИЗМ - (греч. didaktikos - поучительный): нравоучительность, назидательность, моралистическая тенденция, не скрываемая автором воспитательная направленность его произведения.

ДИЛОГИЯ - (греч. di - два, logos - слово, повествование): соединение двух композиционно самостоятельных произведений, связанных между собой общностью замысла, сюжета и действующих лиц ("Золотой теленок", "Двенадцать стульев" И.Ильфа и Е.Петрова,).

ДИСКУРС - (лат. discursus - рассуждение): многозначное понятие, введенное структуралистами (Д.Дано, А.Греймас, Ж.Курте). Под дискурсом в первую очередь понимают специфический способ или специфические правила организации речевой деятельности (письменной или устной). Иногда употребляется как понятие, близкое стилю - "литературный дискурс", "научный дискурс".

ԴԻՎԱՆԻ - (պարսկ. - գիրք, գրառում). 1). Հին ծագում ունեցող աշուղային տաղ՝ կազմված 15 վանկանի երկտող (բեյթ) կամ քառատող (ռուբայի) տներից, հիմնականում կյանքի, սիրո, խրատական մտփվներով: 2). Արևելյան բանաստեղծների քնարական ստեղծագործությունների ժողովածու, որոնք դասավորված են հատուկ ժանրային հերթականությամբ:

ԴԻԴԱԿՏԻԶՄ - (հուն. didaktikos - ուսուցողական). գիտական դրույթներ, բարոյախրատական, հասարակական-քաղաքական, մանկավարժական մտքեր, որոնք շարադրվում են ստեղծագործությունների մեջ:

ԵՐԿՊԱՏՈՒՄ, ԴԻԼՈԳԻԱ - (հուն. di - երկու, logos - խոսք). երկու ինքնուրույն մասերից բաղկացած գեղարվեստական ստեղծագործություն, որն ունի գաղափարական ընդհանուր մտահղացում և միասնական գլխավոր հերոսներ:

ՔՆՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, ԴԻՍԿՈՒՐՍ - (ֆր. discourse - քննախոսություն). բազմաձևակ հասկացություն, որ առաջ են բաշխվ ստրուկտուրալիստները (Ա.Գրեյմաս, Դ.Դանո, Ժ.Կուրտե): Դիսկուրսի տակ առաջին հերթին հասկանում են խոսքի գործածության (գրավոր կամ բանավոր) առանձնահատուկ միջոցը կամ առանձնահատուկ օրենքի կազմակերպումը: Հաճախ օգտագործվում է ինչպես ոճին մոտ հասկացություն՝ "գրական քննախոսություն", "գիտական քննախոսություն":

ДИСТИХ - (греч. distichon - дважды): стихотворение из двух строк, выражающее оригинальную глубокую мысль.

Когда легковверен и молод я был,
Младую гречанку я страстно любил...
А.Пушкин

ДИФИРАМБ - (греч. dithyrambos - песня): жанр античной лирики, хоровая песня, гимн в честь бога Диониса, сопровождаемый танцем. Способствовал возникновению античной драмы. В поэзии - произведение, близкое оде.

ДРАМА - (греч. drama - действие): 1). Один из трех родов литературы, наряду с эпосом и лирикой. Основу драмы составляет развертывающееся в настоящем времени действие, показанное через острые конфликты и в форме диалога. В зависимости от характера конфликтов, целей борьбы, которую ведут герои, от чувств, возникающих при этом у читателя, драматические произведения делятся на трагедии, комедии, драмы.

2). Один из основных жанров драмы как литературного рода. Пьеса с острым конфликтом, главная цель которой - изображение личности в ее драматических отношениях с обществом.

ԴԻՍՏԻՔՈՍ - (հուն. distichon - երկտող). անտիկ տաղաչափությունից սկիզբ առնող բանաստեղծական տան կամ առանձին ոտանավորի տեսակ, որը բաղկացած է երկու տողից:

Դեռ նոր հանդիպած՝ մենք բաժանվեցինք,
Իրար նոր գտած՝ կորցրեցինք իրար:
Պ.Սևակ

ԴԻՖԻՐԱՄԲ - (հուն. dithyrambos - երգ). Հին Հունաստանում ուրախության աստված Դիոնիսոսին նվիրված փառաբանական երգ՝ պարերի ու նվագի ուղեկցությամբ: Դիֆիրամբներից սկիզբ է առնում անտիկ ողբերգությունը: Պոեզիայում՝ ներբողին մոտիկ ստեղծագործություն:

ԴՐԱՄԱ - (հուն. drama - գործողություն). 1). գեղարվեստական գրականության երեք սեռերից մեկը՝ էպոսի և լիրիկայի հետ միասին: Դրամայի խնդիրն է պատկերել հասարակ մարդկանց առօրյա կյանքն ու կենցաղը, հոգևոր աշխարհն ու ձգտումները: Իր հերթին դրաման բաժանվում է գրական ժանրերի, որոնք բնութագրվում են բովանդակության ու ձևի որոշ կանոնադրական կառուցվածքներով՝ ողբերգության, կատակերգության և դրամայի:

2). գրական-դրամատիկական ժանրերից մեկը: Դրամայում դեպքերը պատկերվում են սուր բախումների, հոգեբանական լարված վիճակների, մարդկային բազմազան հարաբերությունների բնական զարգացման մեջ:

ЖАНР - (франц. genre – вид): форма, в которой проявляются основные роды литературы – эпос, лирика, драма. К эпическим жанрам относятся: эпос, поэма, роман, повесть, новелла, рассказ, басня, художественный очерк и т.п.; к лирическим жанрам – баллада, элегия, стихотворение, ода, эклога и т. д.; к драматическим жанрам – трагедия, комедия, драма, мелодрама, водевиль и др.

Жанры возникают и развиваются в зависимости от тех задач, которые решает литература, от эстетических взглядов писателей, от характера жизненного материала, к которому они обращаются.

ЖИТИЯ СВЯТЫХ, АГИОГРАФИЯ – (греч. hagios – святой, grapho – пишу): жанр церковной литературы; жизнеописание духовных и светских лиц, канонизированных христианской церковью (“Житие Александра Невского”).

ЗАВЯЗКА – начальный момент в развитии событий, изображенных в драматических и эпических произведениях. Нередко ей предшествует экспозиция. В завязке читатель получает первые представления об изображаемых характерах и конфликте между ними.

ԺԱՆՐ ՊՐԱՎԱՆ - (ֆր. genre – տեսակ). Ժողովրդական բանահյուսության և գեղարվեստական գրականության ստեղծագործությունների հատուկ տեսակ: Ժանրերն իրենց բնույթով տարբերվում են իրարից և մտնում են գրականության սեռերի մեջ:

Էպիկական սեռի ժանրերն են առակը, հեքիաթը, առասպելը, վիպերգությունը, վեպը, պատմվածքը, նորավեպը, վիպակը, գեղարվեստական ակնարկը, ֆելիետոնը և այլն: Զնարական սեռի ժանրերից են երգը, եղերերգությունը, ներբողը, տարբեր տեսակի քնարական բանաստեղծությունները, էպիգրամը և այլն: Դրամատիկական սեռի ժանրերն են ողբերգությունը, կատակերգությունը, դրաման, վոդևիլը, ֆարսը և այլն:

ՎԱՐՔԱՊՐՈՒԹՅՈՒՆ, ԱԳՈՂՊՐԱՖԻԱ – պատմողական գրականության հնագույն տեսակներից մեկը: Պատմական կամ եկեղեցական նշանավոր գործիչների, սրբերի կյանքին ու գործունեությանը նվիրված գրքեր (“Վարք Մաշտոցի”):

ՀԱՆՎՈՒՅՑ – սյուժեի բաղադրամասերից մեկը, որից սկիզբ է առնում ստեղծագործության հիմնական կոնֆլիկտը: Որոշ երկերում հանգույցը ծագում է արագ կերպով, երկի հենց սկզբում, այլ երկերում հանդիպում ենք աստիճանաբար զոյացող հանգույցի: Գեղարվեստական երկը սովորաբար ավարտվում է հանգույցի լուծումով:

ЗАГАДКА – жанр фольклора, в котором вещи и явления воспроизводятся иносказательно через сравнение их с отдаленно сходными; обычно предлагается как вопрос для отгадывания. От традиционных загадок отличаются шуточные загадки, основанные на игре слов, арифметические головоломки, шарады.

ЗАМЫСЕЛ – первая ступень творческого процесса, первоначальный набросок будущего произведения, возникающий в сознании писателя. У замысла существуют две стороны: сюжетная (автор заранее намечает ход событий) и идейная (предполагаемое решение проблем и конфликтов). Изменение замысла сюжета ведет к изменению идейного замысла.

ЗАПАДНИЧЕСТВО – направление русской общественной мысли середины 19 века. Выступали за развитие России по западно-европейскому пути, отмену крепостного права, установление личных свобод, укрепление законности, защиту прав граждан. Главные представители – В.Белинский, А.Герцен, И.Тургенев, В.Боткин, В.Майков и др. Издавали журналы “Отечественные записки”, “Современник”, “Русский вестник”.

ՀԱՆԵՆՈՒԿ – ժողովրդական ստեղծագործության տեսակներից մեկը, որը առարկան կամ երևույթը պատկերում է այլաբանորեն, նրա հատկանիշները նկարագրում գաղտնագրված ձևով: Հանելուկները կարող են լինել արծակ և չափածո:

ՄՏԱՀՂԱՑՈՒՄ - գեղարվեստական երկի թեմայի, գաղափարի և պլանի նախնական ուրվագծումը, որն առաջանում է գրողի գիտակցության մեջ և մղում նրան ստեղծագործական աշխատանքի: Մտահղացումը ծնվում է գրողի կենսափորձից, կյանքի այն երևույթների ազդեցության տակ, որոնք գրվում են նրա ուշադրությունը իրենց իմաստով և նշանակությամբ: Գրելու ընթացքում երկի նախնական մտահղացումը հարստանում է նոր գծերով, երբեմն էլ ենթարկվում փոփոխությունների:

ԱՐԵՎՄՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԶԱՊԱԴՆԻՉԵՍՏՎՈՒՄ – ուղղություն 19-րդ դարի կեսերին ռուսական հասարակական մտքի մեջ: Հանդես են եկել Ռուսաստանի զարգացման արևմտաեվրոպական ուղու օգտին՝ հանուն ճորտատիրական կարգերի վերացման, անհատի ազատության, օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքի պաշտպանության: Վլխավոր ներկայացուցիչներն են Վ.Բելինսկին, Ա. Գերցենը, Վ. Բոտկինը, Ի.Տուրգենևը և այլք: Հրատարակել են “Օտեչեստվեննիե զապիսկի”, “Սովրեմեննիկ” “Ռուսսկի վեստնիկ” հանդեսները:

ЗАЧИН – устойчивая словесная формула, с которой начинаются сказки, былины и другие произведения фольклора. Может указывать на время и место происходящего (“В некотором царстве, тридесятом государстве, жили-были...”).

ЗВУКОПИСЬ – подбор звуков в стихотворной речи, имеющий художественно-выразительное значение в соотношении с содержанием текста. Различают виды звукописи: аллитерация (повтор одинаковых согласных звуков) и ассонанс (повторение одинаковых гласных звуков).

ИДЕЙНОСТЬ – (греч. idea – понятие): идейная направленность произведения, определяющаяся глубиной и верностью мировоззрения писателя и определяющая значительность содержания произведения.

ИДЕЯ ПРОИЗВЕДЕНИЯ – обобщающая, эмоциональная, образная мысль, основной принципиальный смысл произведения, выступающий через все единство его образов. Предметом художественной мысли всегда бывают такие индивидуальные явления жизни, в которых наиболее отчетливо и активно проявляются ее существенные особенности. Правдивость идейной направленности произведения, при глубине обобщающего осмысления жизни и эстетическом

ՆԱՆԱՍՎԱԾԸ – բանախոսության ստեղծագործություններում սյուժեի հետ անմիջականորեն չկապված, երբեմն նախերգանքին նախորդող գվարճասույթի ռիթմիկայի կազմակերպման ժողովրդական ավանդական անվանումը, որի նպատակն է լսողների երևակայությունը հետաքրքրելն ու հրապուրելը:

ՅՆՉԱՅԱՆԳՈՒԹՅՈՒՆ – բանաստեղծական խոսքի մեջ հնչյունների ընտրություն, որն ունի գեղագիտական-արտահայտչական նշանակություն՝ առնչված բնագրի բովանդակությանը: Յնչահանգությունն ունի իր տեսակները՝ բաղաձայնային (նույն բաղաձայնների կրկնություն) և առձայնային (նույն ձայնավորների կրկնություն):

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ – արվեստի և գրականության էության կարևորագույն կողմերից մեկն է, ստեղծագործության մեջ իրականության գնահատականը որոշակի հասարակական դիրքերից:

ԳԱՂԱՓԱՐԸ ԳԵՂԱՐՎԵՏՏԱԿԱՆ – պատկերվող իրականության նկատմամբ հեղինակի վերաբերմունքը, նրա արտահայտած գնահատականն ու եզրակացությունը: Երկի գաղափարը նրա թեմայի հետ միասին կազմում է ստեղծագործության թեմատիկ-գաղափարական հիմքը կամ բովանդակությունը: Ստեղծագործության գաղափարը խոշոր չափով պայմանավորում է նրա գեղարվեստական որակն ու հասարակության կյանքում ունեցած դերը: Որքան բարձր ու գեղեցիկ է գեղարվեստորեն արտա-

совершенстве образного выражения идеи, делает произведение высокохудожественным, дает ему общенациональное, народное, иногда и всемирно-историческое значение.

ИДИЛЛИЯ – (греч. eidyllion – картинка): жанровая форма буколической поэзии, изображение мирной добродетельной сельской жизни на фоне прекрасной природы.

ИДИОМА – (греч. idioma – своеобразие): разновидность фразеологизмов; словосочетание, свойственное данному языку и не переводимое дословно на другой язык (“бить баклуши”, “попасть впросак”).

ИКТ – (лат. ictus – ударение): сильное место в стихе, несущее ритмическое ударение: чередование таких сильных мест со слабыми образует метр стиха.

ИМАЖИНИЗМ – (франц. image – образ): авангардистское литературное течение в России в начале XX в. В 1919 с изложением его принципов выступили В.Шершеневич, Р.Ивнев, А.Мариенгоф, С.Есенин и др. Провозглашали “победу образа над смыслом”. Стихотворение могло не иметь содержания, но оно должно было быть насыщено словесными образами.

հայտված գաղափարը, այնքան ավելի նշանակալից է երկն իր ամբողջության մեջ:

ՀՈՎՎԵՐԳՈՒԹՅՈՒՆ, ԻԴԻԼԻԱ – (հուն. eidyllion – նկար). բուկոլիկ գրականության ժանրերից մեկը, ստեղծագործություն, որի մեջ պատկերվում է բնության գրկում ապրող մարդկանց՝ գեղջուկների, հովիվների, ձկնորսների խաղաղ ու անհոգ կյանքը:

ՀՍԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԻԴԻՈՄԱ – (հուն. idioma – առանձնահատկություն). ոճական կայուն, բառացի անթարգմանելի արտահայտություն, դարձվածքի տարատեսակ (“աչքդ լույս”, “կյանքիդ մեռնեմ”):

ԻԿՏ – (լատ. ictus – շեշտ). ռիթմական շեշտը կրող բանաստեղծական տողի այն ուժեղ հատվածը, որի հերթագայությունը թույլ մասերի հետ ձևավորում է ոտանավորի բանաստեղծական չափը:

ԻՍԱԺԻՆԻԶՄ – (ֆր. image – պատկեր). գրական ուղղություն ռուսական պոեզիայում 1910-ական և 1920-ական թթ: Ներկայացուցիչներն էին Ա.Եսենինը, Ա.Մարիենգոֆը, Ռ. Իվնևը, Վ.Շերշենևիչը և այլք: 1919 թ. նրանք հանդես են եկել իրենց սկզբունքներով՝ ընդգծելով “պատկերի հաղթանակը նշուքին”: Ըստ նրանց բանաստեղծությունը կարող է չունենալ բովանդակություն, բայց այն պետք է հագեցված լինի բառային պատկերներով:

ИМПРЕССИОНИЗМ - (франц. *impression* – впечатление): художественное направление, возникшее во Франции во 2-ой пол. XIX века, представители которого стремились наиболее естественно и непредвзято запечатлеть реальный мир в его подвижности и изменчивости, передать свои мимолетные впечатления.

В живописи выдвинул выдающихся мастеров (К.Моне, О.Ренуар, Э.Дега, К.Коровин). В литературе черты импрессионизма встречаются в произведениях писателей разных направлений (Г.де Мопассан, А.Фет, А.Чехов, И.Бунин и др.) и выражают прежде всего впечатления, ощущения, личное, при этом сиюминутное восприятие окружающего мира.

ИНВЕКТИВА - (лат. *invehor* – нападаю): бранная речь, резкое обличительное выступление против какого-либо реального лица или явления жизни ("А вы, надменные потомки...", М.Лермонтов). Противостоит панегирику.

ИНВЕРСИЯ - (лат. *inversio* – перестановка): нарушение общепринятой грамматической последовательности слов, придающее фразе новый выразительный оттенок. Часто встречается в стихах.

И девы песьнь едва слышна
Долины в тишине глубокой.
А.Пушкин

ИМПРЕССИОНИЗМ - (фр. *impression* – впечатление). ուղղություն XIX դարի վերջի արվեստի և գրականության մեջ, որը հիմնվում էր կյանքից ստացած անմիջական տպավորությունների վրա:

Գրականության մեջ առաջ է գալիս առանձին տրամադրության կամ հոգեվիճակի ամենափոքր երանգների ցուցադրումը: Իրականության ամբողջական ընկալումը փոխարինվեց կտրտված, ակնթարթային, հաճախ քմահաճորեն ծագող և անհետացող տպավորություններով:

ԻՆՎԵԿՏԻՎ - (լատ. *invektiva oratio* – մեղադրական ճառ). որևէ բացասական երևույթի կամ անձնավորության դեմ ուղղված զայրալից, մերկացնող ելույթ, քննադատական ստեղծագործություն (Պ.Դուրյան "Տրտունջը"):

ՇՐՋԱՎԱՍՏՈՒԹՅՈՒՆ, ԻՆՎԵՐՍԻԱ - (լատ. *inversio* – տեղափոխում). բանաստեղծական խոսքի արտահայտչական միջոցներից մեկը, որն արտահայտվում է նախադասության անդամների դասավորության ընդունված կարգի փոփոխությամբ: Տեղափոխված բառերն ստանում են տրամաբանական և հուզական ուժեղ շեշտ: Շրջադասությունն օգնում է նաև անհրաժեշտ հանգավորում ստեղծելուն, որով ավելի ռիթմիկ ու արտահայտիչ է դարձնում բանաստեղծական տողերը:

ИНСЦЕНИРОВКА - (лат. *in* – на, *scaena* – сцена): переработка эпического произведения для театра, телевидения, радио с целью сценического воплощения.

ИНТЕРПРЕТАЦИЯ – (лат. *interpretatio* – объяснение): истолкование текста, направленное на понимание его смысла. См. Экзегетика, Герменевтика.

ИНТЕРТЕКСТУАЛЬНОСТЬ – (франц. *intertextualite*): один из основных терминов в анализе художественных произведений постмодернизма (Ю.Кристева). Буквально означает включение одного текста в другой. Концепция интертекстуальности связана с теоретической "смертью автора", т.е. растворением созданного конкретным автором текста в явных и неявных цитатах, реминисценциях, аллюзиях. "Каждый текст является интертекстом; другие тексты присутствуют в нем на различных уровнях в более или менее узнаваемых формах: тексты предшествующей культуры и тексты окружающей культуры" (Р.Барт).

ИНТЕРЬЕР – (франц. *interieur* – внутренний): изображение в художественном произведении внутренней обстановки помещения (дома, усадьбы, комнаты героя и т.д.). Выступает как средство характеристики героя.

ԲԵՍԱՎԱՆԱՑՈՒՄ - (լատ. *in* – վրա, *scaena* – բեմ). արձակ կամ չափածո գրական երկի վերածույնը դրամատիկական ստեղծագործության՝ թատրոնի, հեռուստատեսության, ռադիոյի համար:

ՍԵՎԵՆՏՈՒԹՅՈՒՆ - անհասկանալի տեքստի բացատրություն: Տե՛ս Սեկնաբանություն, Էկզեգետիկա:

ԻՆՏԵՐՏԵՔՍՏՈՒԱԼՈՒԹՅՈՒՆ - (անգլ. *intertextuality*): գեղարվեստական երկի վերլուծության պոստմոդերնիզմի հիմնական տերմիններից մեկը (Յու.Կրիստեա): Տառացիորեն նշանակում է մի տեքստի ներառումը մի ուրիշ տեքստի մեջ: Ինտերտեքստուալության սկզբունքը առնչվում է "հեղինակի մահվան" տեսական ընկալման հետ, այսինքն՝ հեղինակի ստեղծած կոնկրետ տեքստի շաղախումը բացարձակ և ոչ բացարձակ հատվածներում, վերհուշերում, մտորումներում: "Ամեն մի տեքստ հանդիսանում է ինտերտեքստ. ուրիշ տեքստերը ներկայանում են նրանում տարբեր աստիճաններով, շատ թե քիչ ճանաչված ձևերով՝ նախորդ մշակույթի տեքստերը և շրջակա մշակույթի տեքստերը" (Ռ.Բարտ):

ԻՆՏԵՐՅԵՐ - (ֆր. *interieur* – ներքին). գեղարվեստական երկում շենքի (հերոսի տան, սենյակի և այլն) ներքին կահավորանքի պատկերում, հերոսին բնութագրող միջոց:

ИНТОНАЦИЯ – (лат. intonare – произносить громко): выразительное средство звучащей речи, позволяющее передать отношение говорящего к предмету речи. Образуется за счет повышения или понижения тона, громкости или приглушенности речи, акцентированных ударений, речевых пауз. Особое значение интонация имеет в художественной прозаической и стихотворной речи, особенно в лирике.

ИНТРИГА – (лат. intricare – запутывать): обострение сюжета в литературном произведении с помощью использования различных случайностей, совпадений, обманных ходов, запутывающих действие, делающих неясным дальнейшее развитие конфликта и неожиданным его разрешение. Служит целям раскрытия характеров персонажей через поступки.

ИРОНИЯ – (греч. eironeia – насмешка): разновидность тропы, отрицательная оценка предмета или явления через его осмеяние. В литературном произведении ирония придает художественному изображению особую окраску, своеобразно раскрывая неудовлетворенность автора окружающим миром.

ԵԼԵՎԷԶԱՎՈՐՈՒՄ, ԻՆՏՈՆԱՅԻԱ – (լատ. intonare – բարձր արտասանել). բառերի ու նախադասությունների արտասանության եղանակ, որով խոսքը որոշակի վերաբերմունք է արտահայտում իր ասածի կամ գրուցակցի նկատմամբ, շեշտում է իմաստի այս կամ այն կողմը: Արտասանության եղանակը որոշվում է բառերի շեշտադրությամբ, արտասանության ուժով, արագությամբ, հնչերանգով, դադարներով և այլ գործոններով:

ԻՆՏՐԻԳ - (ֆր. intrigue – խճճում). գեղարվեստական երկերի մեջ պատմվող դեպքերի բարդ շղթա, անձնական շահերի և նպատակների համար մղվող պայքար: Ինտրիգը հերոսների միջև ծագող հակադրության կոնֆլիկտի տեսակներից մեկն է և վերջին հաշվով արտահայտում է հասարակական տարբերուժերի բախումը:

ՅԵԳՆԱՆԵ, ԻՐՈՆԻԱ - (հուն. eironeia – սրողված ծաղր). երգիծանքի դրսևորման միջոցներից մեկը: Յեգնական վերաբերմունքի դեպքում անարժան, ծաղրի ենթակա առարկան կամ անձնավորությունը առերևույթ բնութագրվում է դրական, բարձր հատկանիշներով: Այդպիսի բնութագիրը ընկալվում է որպես ծաղր, որն իր բնույթով կարող է լինել մեղմ, բարեսիրտ կամ թունոտ, զայրալից, արհամարհական և այլն:

“ИСКУССТВО ДЛЯ ИСКУССТВА”, “Чистое искусство” - сложившаяся в 19 в. теория, в основе которой лежит утверждение независимости художественного творчества от политики, общественных требований, воспитательных задач, провозглашение самодостаточности искусства, противопоставление возвышенности и совершенства классических художественных форм несовершенству окружающей действительности (А.Григорьев, А.Фет, А.Майков и др.).

ИСТОРИЗМ – способность художественной литературы точно воссоздавать облик, колорит, дух, самобытность исторической эпохи в конкретных картинах жизни, человеческих судьбах и событиях. Суть историзма составляет рассмотрение действительности в развитии, взаимных связях, взаимообусловленности.

ИСТОРИЯ ЛИТЕРАТУРЫ – один из основных разделов литературоведения. Предметом истории литературы является прошлое литературы как процесс или как один из моментов этого процесса. История литературы изучает литературу в ее развитии, смену стилей, течений, методов, взаимодействия литератур и другие формы литературного процесса, исследует самый процесс литературного развития в его конкретных проявлениях.

“ԱՐՎԵՍԸ ԱՐՎԵՍԻ ՀԱՄԱՐ”, “ՄԱՔՈՒՐ ԱՐՎԵՍ” – տեսություն, որը ժխտում է արվեստի կապը հասարակական կյանքի հետ, պաշտպանում նրա “բացարձակ անկախության” և “անշահախնդրության” սկզբունքը: “Մաքուր արվեստի” կողմնակիցները պնդում էին, որ արվեստը չպետք է միջամտի կյանքի հարցերին, ոչ մի միտում չպետք է ունենա, իսկ արվեստագետը պետք է ոգեշնչի միայն “գեղեցիկ իդեալով”:

ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ - գեղարվեստական գրականության կարողությունը՝ պատմական դարաշրջանի դիմանկարը, կոլորիտը, ոգին, ինքնատիպությունը կյանքի կոնկրետ պատկերներում, մարդկային ճակատագրերում և իրադարձություններում ճշգրիտ պատկերելու ուղղությամբ: Պատմականության էությունը կայանում է նրանում, որ իրականությունը դիտարկվի նրա զարգացման, փոփոխականության, փոխադարձ պայմանավորվածության մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ – գրականագիտության հիմնական բաժիններից մեկը, որն զբաղվում է անցյալի գրականության հետազոտությամբ: Այն նպատակ ունի բացահայտել և նկարագրել այս կամ այն դարաշրջանում, ազգային միջավայրում գրականության զարգացման բոլոր հիմնական գործոններն ու բաղադրամասերը՝ գրական ուղղությունները, ժանրերը, ոճերը, գրական առնչությունները, առանձին գրողների և ստեղծագործությունների տեղը այդ ընդհանուր համակարգում:

КАСЫДА – (араб.): жанр восточной лирической поэзии, стихотворение, близкое оде. По системе рифмовки (aa ba ca ...) похожа на газель, но объемнее (от 15 до 200 бейтов).

КАТАРСИС – (греч. katharsis – очищение): термин античной философии и эстетики (Аристотель); "очищение", "просветление" человеческой души посредством сострадания и страха, освобождение от негативной эмоции, которую способен вызвать предмет изображения.

КАТРЕН – (франц. quatrain, от quatre – четыре): строфа из четырех строк, четверостишие (рубаи, айрен). Стихотворение обычно состоит из нескольких катренов. Как самостоятельное стихотворение используется для надписей, эпиграмм, эпитафий, эпиграмм, изречений.

КЛАССИКА, Классическая литература – (лат. classicus – образцовый): литературное наследие писателей, признаваемых лучшими в национальной и мировой литературе. Классическим периодом в национальной литературе принято считать время появления наибольшего числа больших дарований, создающих законы, традиции этой литературы.

ՔԱՍԻԴ – (արաբ. - նշան բռնել). արևելյան պոեզիայում ներքողական բովանդակությամբ ուտանավորի կայուն ձև: Քասիդը բաղկացած է երկու տողանի տներից (բեյթեր), որոնք կապվում են հանգավորման որոշակի եղանակով (aa ba ca ...):

ԿԱՏԱՐՍԻՍ – (հուն. katharsis – մաքրում). հին հունական գեղագիտության կարևոր հասկացություններից մեկը: Արվեստը մարդու մեջ առաջացնում է տարբեր զգացմունքներ, սակայն ի վերջո այն մաքրում է այդ զգացմունքների անմիջական տարերային ներգործությունից՝ առաջացնելով գիտակցված վերաբերմունք կյանքի երևույթների նկատմամբ, պատճառելով բարոյագեղագիտական բարձր բավականություն:

ՔԱՏՐԵՆ, ՔԱՍՏՈՂ ՏՈՒՆ – (ֆր. quatrain – չորս). բանաստեղծական տան ամենատարածված տեսակը, որով գրված է համաշխարհային պոեզիայի երկերի մեծ մասը: Քառատող տունը կարող է լինել նաև ատոմի, ինքնուրույն բանաստեղծություն. քառյակ, ռուբայի, հայրենի:

ԴԱՍԱԿԱՆ (ԿԼԱՍԻԿ) ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ – այն գրական երկերը, որոնք իրենց գաղափարական և գեղարվեստական արժանիքներով դիմացել են ժամանակի քննությանը և ժողովրդի գիտակցության մեջ և ժողովրդի գիտակցության մեջ: Իկելի ստեղծագործությունները իրենց արժարժած գաղափարների համամարդկային նշանակալից և գեղարվեստական մեծ ընդհանրա-կացումների շնորհիվ դասական գրականության լավագույն երկերը կուրս են գալիս ազգային շրջանակներից և դառնում ամբողջ մարդկության սեփականությունը:

КЛАССИЦИЗМ – художественное направление в искусстве и литературе XVII – начала XIX века, для которого характерны высокая гражданская тематика, строгое соблюдение определенных творческих норм и правил. Одной из важных черт являлось обращение к образам и формам античной литературы и искусства как идеальному эстетическому эталону. Поэтика французского классицизма законченно-системное выражение получает в "Поэтическом искусстве" (1674) Н.Буало. Эстетика классицизма устанавливает строгую иерархию жанров, которые делятся на "высокие" (трагедия, эпопея, ода) и "низкие" (комедия, сатира, басня, изображающие частную повседневную жизнь людей средних сословий).

В России классицизм зародился во 2-й четв. 18 века в творчестве зачинателей новой русской литературы А.Кантемира, В.Тредиаковского, М. Ломоносова. Освоив сложившиеся на Западе жанровые и стилевые формы, русский классицизм сохранил свою национальную самобытность, которая характеризуется сатирической направленностью, преобладанием национально-исторической тематики над античной, а также высоким уровнем развития жанра оды, в которой получил прямое лирическое выражение патристический пафос, характеризующий русский классицизм в целом.

ԴԱՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԿԼԱՍԻՑԻԶՄ – (լատ. classicus – առաջնակարգ, օրինակելի). XVII – XIX դարասկզբի գրականության և արվեստի ուղղություններից (մեթոդներից) մեկը: Իր առավել բնորոշ և ամբողջական դրսևորումը գտավ XVII դարի ֆրանսիական արվեստում: Ուղղության տեսական հիմունքները շարադրված են Ն.Բուալոյի "Քերթողական արվեստ" (1674) չափածո աշխատության մեջ: Այն հասարակականորեն ակտիվ արվեստ էր, որը ձգտում էր գրականությունը ծառայեցնել ժամանակի քաղաքական խնդիրներին, համապետական և համազգային շահերին: Գեղարվեստի բարձրագույն տիպարն ու չափանիշը կլասիցիստ գրողները տեսնում էին անտիկ աշխարհի գրականության մեջ, աշխատում էին հետևել ու նմանվել նրան: Շատ դեպքերում նրանք անտիկ դիցաբանությունից և գրականությունից էին քաղում իրենց երկերի թեմաները, կերպարներն ու սյուժեները, նույնիսկ ոճեր և արտահայտություններ: Գեղարվեստական գրականությունը ենթարկվում էր որոշ պարտադիր կանոնների, գրական ժանրերը բաժանվում էին "բարձր" (հերոսական պոեմ, ներքող, ողբերգություն) և "ցածր" (կատակերգություն, առակ) խմբերի՝ իրենց համապատասխան թեմաներով և ոճով. Խստորեն կիրառվում էր տեղի, ժամանակի և գործողության միասնության սկզբունքը ("երեք միասնության" օրենքը):

Ռուսական կլասիցիզմը (XVIII դ. – Ա.Կանտեմիր, Մ.Լոմոնոսով, Ա.Սումարոկով և ուրիշներ) սերտորեն կապված էր ազգային-պատմական թեմաների մշակման հետ: Հայ գրականության մեջ կլասիցիզմն արմատավորվել է Սուրբ Դավաթ կղզում հիմնադրված Մխիթարյան միաբանությունում (Ա.Բագրատունի, Մ.Ջախջախյան, Դ.Մինասյան):

КЛАУЗУЛА - (лат. clausula - заключение): окончание стиха, т.е. группа слогов, состоящая из последнего ударного и следующих за ним неударных слогов. Клаузулы бывают мужские - с ударением на последнем слоге стиха, женские - с ударением на предпоследнем слоге, дактилические - с ударением на третьем от конца слоге. При повторе созвучных клаузул двух и более стихов возникает рифма.

КЛИМАКС - (греч. klimax - лестница): стилистическая фигура, вид градации; цепь слов или фраз с постепенным нарастанием значимости.

Ни позвать, ни крикнуть, ни помочь.
М.Волошин

КОЛЛИЗИЯ - (лат. collisio - столкновение): противоречие, столкновение, борьба действующих лиц, лежащие в основе действия художественного произведения. Синонимичен термину конфликт, но подразумевает исторический масштаб, глобальность изображаемых противоречий.

КОЛОН - (греч. kolon - часть тела): выразительное средство, ритмико-интонационная единица звучащей речи; речевой такт, выделенный паузами и обычно объединенный логическим ударением.

ԿԼԱՈՒԶՈՒԼԱ - (լատ. clausula - եզրափակում, վերջավորություն). բանաստեղծական տողի վերջավորությունը՝ սկսած վերջին շեշտված վանկից: Ըստ այդ վանկի տեղի էլ կլաուզուլան կոչվում է *արական*, երբ շեշտվում է տողի վերջին վանկը, *իգական*՝ շեշտվում է տողի նախավերջին վանկը, *դաքտիլային*՝ շեշտվում է վերջից երրորդ վանկը: Երբ ոտանավորի մեջ երկու կամ ավելի տողերի վերջավորությունները հնչյունական կազմով նման են, դա կոչվում է հանգ:

ԿԼԻՄԱԿՍ - (հուն. klimax - սանդուղք, ելարան). Ոճական ֆիգուր, աստիճանավորման տեսակ: Ֆրազի մեջ բառերի դասավորության և արտահայտման կարգ՝ ըստ աճող նշանակության:

Եկա, տեսա, հարթեցի:
Յ.Կեսար

ԿՈԼԻԶԻԱ - (լատ. collisio - հակադրություն). գրական երկերում պատկերված հակադիր շահերի, ծգտումների և կրքերի սուր բխում: Կոլիզիան կոնֆլիկտի ձևերից մեկն է, որն արտահայտում է դասակարգային, հասարակական և ազգային հակադիր ուժերի անհաշտ պայքարը:

ԿՈԼՈՆ - (հուն. kolon - մարմնի մաս). պարբերության տարր, ռիթմական միավոր, առոգանական դադարներով առանձնացված և տրամաբանական շեշտով համախմբված խոսքային տակտ:

КОЛЬЦО, ПРОСАПОДОСИС - (греч. prosapodosis - сверх-прибавка): повтор слова или группы слов в начале и конце одного и того же стиха или колона. На кольце основано построение таких форм поэзии как рондо и триолет.

Подарю я шаль из Хорасана
И ковер ширазский подарю.
С.Есенин

КОМЕДИЯ - (греч. komos - веселая процессия, ode - песнь): один из основных видов драмы, в котором характеры, ситуации и действие представлены в смешных формах или проникнуты комическим. Комедия прежде всего устремлена к осмеянию безобразного, противоречащего общественному идеалу или норме. Смех достигается с помощью действия, основанного на комических совпадениях или недоразумениях (интриге), а также диалога, в котором важную роль играют остроумные слова и выражения, кажущиеся в устах данного персонажа нелепыми и смешными.

ՕՂԱԿ, ՊՐՈՍԱՊՈԴՈՍԻՍ - (հուն. prosapodosis - գերհավելում). բառի կամ բառերի խմբի կրկնություն չափածոյի նույն տողի կամ կոլոնի սկզբում և վերջում:

Մ'ը երկրի սրտում բախիծ կա այնքան,
Եվ այնքան ներում - ո՞ր երկրի սրտում...
Վ.Տերյան

ԿԱՍԱԿԵՐՈՒԹՅՈՒՆ, ԿՈՄԵԴԻԱ - (հուն. komodia - ուրախ ներկայացում, երգեր). բատերգական ժանրերից մեկը, որի մեջ երգիծական միջոցներով ծաղրվում են հասարակական կյանքում, մարդկանց կենցաղում, բնավորության և հոգեբանության մեջ եղած բացասական գծերը: Կյանքի բացասական կողմերը կատակերգության մեջ ծաղրվում են կոմիկական վիճակների, խոսքի կոմիզմի ու երգիծանքի այլ միջոցներով: Դեպքերի զարգացման մեջ զգալի դեր են խաղում բյուրիմացությունը, պատահական զուգահեռությունները, որոնց միջոցով բացահայտվում են հերոսների իրական փոխհարաբերություններն ու նրանց բնավորության էությունը:

КОМЕДИЯ ДЕЛЬ'АРТЕ, КОМЕДИЯ МАСОК - (итал. commedia dell'arte): итальянские импровизированные театральные представления по краткому литературному сценарию, основными элементами поэтики которого были острый комический гротеск, интрига, широкое использование музыки. В основе сюжетов - семейные, воспитательные, политические проблемы, но чаще любовные перипетии. Основные типовые маски - Бригелла, Арлекин, Серветта, Пульчинелла, Панталоне, Капитан, Доктор, переходящие из одного спектакля в другой. Оказала значительное влияние на развитие европейского театра.

КОМИЧЕСКОЕ - (греч. komikos - веселый, смешной): смешное в жизни и искусстве. Из всех видов искусства литература располагает наиболее богатыми возможностями для воплощения комического и воспитания человека средствами смеха. Именно в литературе наблюдаются все оттенки и разновидности комического: ирония, юмор, сарказм, сатира.

КОМПАРАТИВИЗМ - (лат. comparativus - сравнительный): см. Сравнительно-историческое литературоведение.

ԴԻՍԱՎԵՆԵՐԻ ԿՈՍԵԴԻԱ - (իտալ. commedia dell'arte). բեմական սխեմատիկ բովանդակությամբ, ինտրիգով, գրական կարճ սցենարով, իտալական թատրոնի (XVI-XVIIIդդ.) հանպատրաստից ներկայացում, որին բնորոշ է կոմիկական սուր գրոտեսկը, երաժշտության առատ օգտագործումը, փողոցային խոսքը: Հիմնական դիմակներն են՝ Բրիգելլան, Առլեկինը, Սերվետտան, Պուլչինելլան: Որպես թատերական ժանր՝ նպաստեց եվրոպական թատրոնի զարգացմանը՝ տալով բեմական անսամբլի առաջին նմուշները:

ԿՈՄԻԿԱՎԱՆ - (հուն. komikos - ուրախ). գեղագիտական հիմնական հասկացություններից մեկը, որը ցույց է տալիս կյանքում և արվեստում ծիծաղ, երգիծական վերաբերմունք հարուցող իրողությունները: Ծաղրվող երևույթի հասարակական վնասակարության չափից, գրողի աշխարհայացքից և տաղանդի բնույթից է կախված այն, թե ժխտման ինչ ուժով է պատկերվում երգիծանքի առարկան: Երգիծական վերաբերմունքի բազմազան երանգներն են՝ հուճուր, սատիրա, հեզանք, սարկազմ:

ԿՈՄՊԱՐԱՏԻՎԻԶՄ - (լատ. comparativus - համեմատական). տե՛ս Պատմահամեմատական գրականագիտություն

КОМПИАЦИЯ - (лат. compilatio - ограбление): работа, составленная на основе чужих произведений или исследований без ссылок на источник.

КОМПОЗИЦИЯ - (лат. compositio - составление, соединение): построение, расположение и взаимосвязь всех частей, образов, эпизодов, сцен произведения, обусловленное его содержанием и жанром. Композиция литературного произведения включает "расстановку" персонажей (систему образов), событий и поступков (К. сюжета или фабула), способов повествования (собственно повествовательная К. как смена точек зрения на изображаемое), подробностей обстановки, поведения, переживаний (К. деталей), стилистических приемов (речевая К.), вставных рассказов и лирических отступлений (К. внесюжетных элементов).

Законы композиции различаются для поэзии и прозы, для разных родов и жанров.

КОНТАМИНАЦИЯ - (лат. contaminatio - смешение): в текстологии - соединение текстов разных редакций одного произведения. Контаминатор руководствуется предполагаемым замыслом автора и приписывает ему получившийся текст ("Демон" М. Лермонтова).

ԿՈՍՊԻԼԱՅՑԻԱ - (լատ. compilatio - թալանել). գիտության և գրականության բնագավառում ստեղծված ոչ ինքնուրույն գործ, որի մտքերը, դրույթները, տվյալներն ու փաստերը փոխ են առնված ուրիշ հեղինակներից:

ԿՈՍՊՈԶԻՑԻԱ - (լատ. compositio - շարադրում, կազմավորում). գրական ստեղծագործության բոլոր բաղադրամասերի կառուցվածքը, նրանց խմբավորումը, դասավորությունն ու փոխադարձ կապը: Գրական ստեղծագործության կառուցվածքը պայմանավորված է նրա թեմայով և զաղափարով: Կառուցվածքային ձևերից են պատումի շարադրանքը հեղինակի, ակնատեսի, կամ գլխավոր հերոսի կողմից, նամականու, օրագրության կամ վերոհիշյալ ձևերի զուգակցմամբ: Գրական երկի կառուցման միջոցներից են կերպարների ընդհանրացված գնահատականը, նրանց դիմակարը, ապրումների և հոգեկան վիճակների, կենցաղային միջավայրի և իրերի նկարագրությունը, բնության տեսարանները, հերոսների ուղղակի խոսքը, հեղինակային շեղումները և այլն:

ԲՎԱՐԿՈՒԹՅՈՒՆ - (լատ. contaminatio - խառնում). միևնույն ստեղծագործության տարբեր խմբագրման տեքստերի միացում, երբ աղբյուրները բավարարող խմբագրում չեն տալիս: Բաղարկությունը վարկածային տեքստ է ստեղծում (Ս.Լերմոնտովի "Ղև" պոեմը):

КОНТЕКСТ - (лат. contextus - сцепление, связь): речевое или ситуативное окружение литературного произведения или его части, в пределах которого наиболее точно выявляется смысл и значение отдельного слова, фразы и т.д. В художественной литературе контекст определяет конкретное содержание, выразительность и стилистическую окраску не только какого-либо фрагмента повествования, но и целого произведения, а также различных художественных средств. Нарушение контекста разрушает художественное единство текста и самый художественный образ; вне контекста невозможно уловить авторское отношение к изображаемому.

КОНФЛИКТ - (лат. conflictus - столкновение): противоборство, противоречие как принцип взаимоотношений между образами в литературном произведении. Будучи основой и движущей силой действия, конфликт определяет главные стадии развития сюжета: зарождение конфликта - завязка; наивысшее обострение - кульминация; разрешение конфликта - развязка. Обычно конфликт выступает в виде коллизии, т.е. прямого столкновения между изображенными в произведении действующими лицами.

ԿՈՆՏԵՔՍՏ - (լատ. contextus - միավորում, կապ). գրական ստեղծագործության բնագրի համեմատաբար ավարտուն միավոր (նախադասություն, պարբերություն, տող կամ տուն): Կոնտեքստն իր բովանդակությամբ պայմանավորում է նաև յուրաքանչյուր բառի և արտահայտության կոնկրետ նշանակությունը, հաճախ վերափոխում է այն: Բառի բուն զեղարվեստական իմաստը ու դերը հանդես են գալիս կոնտեքստի մեջ: Կոնտեքստ հասկացությունը փոխաբերաբար կիրառվում է նաև ամբողջ զեղարվեստական երկի նկատմամբ, ցույց է տալիս նրա բազմազան կապերը հասարակակն կյանքի և զեղարվեստական ավանդույթների հետ:

ԲԱՆՈՒՄ, ԿՈՆՖԼԻԿՏ - (լատ. conflictus - ընդհարում). կենսական հակասությունների պատկերումը զեղարվեստական ստեղծագործության մեջ: Այդ հակասությունները կարող են հանդես գալ ինչպես առանձին անհատների, այնպես էլ սոցիալական, ազգային, քաղաքական շահերի բախման ձևով: Կոնֆլիկտը կարող է դրսևորվել նաև հերոսների հոգեկան աշխարհում՝ իրարամերժ գաղափարների, զգացմունքների և ձգտումների բախման ձևով: Կոնֆլիկտի հիմնական տեսակներն են ինտրիգը և կոլիզիան:

КОНЪЕКТУРА - (лат. conjectura - догадка): исправление, восстановление испорченного текста или расшифровка его частей, не поддающихся прочтению.

КРИПТОНИМ - (греч. kryptos - тайный, скрытый, опута - имя): скрытое имя, с которым в печати часто выступают писатели, публицисты, критики. ("К.Р." - Константин Романов; "М." - Аполлон Майков). В отличие от псевдонима могут использоваться несколько криптонимов.

КРИТИКА ЛИТЕРАТУРНАЯ - (греч. kritike - судить, искусство разбирать): одна из составных частей литературоведения. Тесно связанная с историей и теорией литературы, литературная критика оценивает главным образом современное литературное развитие, истолковывает художественные произведения с точки зрения современности. Критик помогает читателю глубже в них разобраться и показывает писателю достоинства и недостатки произведения. В современной литературной критике используются такие жанры, как статья, рецензия, обзор, эссе, литературный портрет, литературно-критический диалог.

ԿՈՆՅԵԿՏՈՒՐԱ - (լատ. conjectura - ենթադրություն). բնագրում բացակայող կամ չկարդացվող մասի վերականգնում, որը մտցվում է տեքստի մեջ գիտական նկարագրության ժամանակ:

ՃԱԾԿԱՆՈՒՆ, ԿՐԻՊՏՈՆԻՄ - (հուն. kryptos - ծածուկ, թաքնված, opyta - անուն). մականուն, որով հանդես են գալիս հաճախ գրողները, հրապարակախոսները և այլք ("Ա. Բ.", "Կրծիմ" - Ալեքսանդր Բալանթար, "Ն. Ա." - Նիկոլ Աղբալյան;):

ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԳՐԱԿԱՆ - գրականագիտության հիմնական բաժիններից մեկը, որն զբաղվում է գերազանցապես ժամանակակից գրականության հարցերով: Գրական քննադատությունը տեսական ընդհանուր սկզբունքների կիրառումն է կոնկրետ զեղարվեստական երկերի նկատմամբ: Քննադատը կոչված է բացատրելու գրական ստեղծագործության հասարակական իմաստն ու զեղագիտական նշանակությունը: Գրական քննադատությունն ունի բազմաթիվ տեսակներ՝ գրախոսություն, գրական կյանքի այս կամ այն հարցն արծարծող պորբլեմային հոդված կամ տեսություն, գրական դիմանկար, ուրվագիծ, մենագրություն ժամանակակից գրողի մասին և այլն:

КРИТИЧЕСКИЙ РЕАЛИЗМ – направление в реалистической литературе и искусстве XIX-XX вв., ориентированное на непосредственное отражение несовершенства повседневной жизни людей, несправедливости общественного порядка и мироустройства в целом. Основное свойство – обличительная направленность произведений. Для критического реализма характерны: гуманизм, народность, изображение персонажей во взаимодействии с окружающим миром (через портрет, пейзаж, систему персонажей, детали интерьера).

КУЛЬМИНАЦИЯ – (лат. culmen – вершина): наиболее напряженный момент в развитии действия литературно-художественного произведения. Играет существенную роль в раскрытии характеров действующих лиц и в разворачивании художественного конфликта.

КУРТУАЗНАЯ ЛИТЕРАТУРА – (франц. courtois – любезный, вежливый): придворно-рыцарское направление в средневековой европейской литературе (12-15 вв.). Лирические стихотворения, песни, новеллы посвящены приключениям и подвигам рыцарей, воспеванию их чести и любви.

ՔՆՆԱԴՍԱԿԱՆ ՌԵԱԼԻԶՄ – XIX-XX դդ. գեղարվեստական ուղղություն: Զննադատական ռեալիզմի հիմնական ոգին ժամանակակից հասարակության սոցիալ-քառոյական արատների անխնա և հետևողական մերկացումն էր: Ռեալիստ գրողները գեղարվեստական խոսքի հզոր ուժով բացահայտում էին բուրժուական հարաբերությունների հակամարդկային էությունը, ցույց էին տալիս տիրող խավերի շահամուլությունն ու էգոիզմը, քառոյական այլասերումը, աշխատավոր մարդկանց թշվառությունը, նրանց լավագույն ձգտումների խորտակումը:

ՉԱԳԱԹՆԱԿԵՏ, ԿՈՒՆԻՆԱՅԻՄ – (լատ. culmen – գագաթ). սյուժեի հիմնական մասերից մեկը, գեղարվեստական երկում գործողությունների զարգացման ամենաբարձր կետը, ամենալարված աստիճանը, որին հաջորդում է հանգույցի լուծումը: Գագաթնակետը հատկապես ցայտուն է դրսևորվում սյուժետային այնպիսի երկերում, որտեղ պատկերված են ուժեղ բախումներ:

ԿՈՒՐՏՈՒԱԶԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ – (ֆր. courtois – հարգալից, բաղաբավարի). միջնադարյան եվրոպական գրականության մեջ արքունի-ասպետական ուղղություն: Ասպետական վեպի, նովելի ու քնարերգության պաթոսը վերնախավի իդեալներն են և խիզախումները հանուն անձնական փառքի ու քառոյական կատարելության:

ЛЕГЕНДА – (лат. legenda – то, что следует прочесть): в фольклоре – вошедший в традицию устный народный рассказ, в основе которого лежит чудо, фантастический образ или представление, воспринимающиеся как достоверные. Подразделяются на исторические, топонимические, религиозные, бытовые, этнографические и др.

ЛЕЙТМОТИВ – (нем. leitmotiv – ведущий мотив): преобладающее настроение, главная тема, основной идейный и эмоциональный тон произведения, направления; образ или оборот художественной речи, повторяющийся в произведении как момент постоянной характеристики героя, переживания или ситуации.

ЛЕТОПИСЬ – один из основных жанров древнерусской литературы, произведение, состоящее из последовательного описания исторических событий. Повествование в летописи было двух типов: собственно погодные записи-сообщения (по годам), и летописные рассказы-описания событий. ("Повести временных лет", XII в; "Лицевой свод", XVI в.).

ЛИПОГРАММА – (греч. leipo – пренебрегаю, gramma – буква): текст, написанный без одной или нескольких звуков.

Я на холме спал высоком,
Слышал глас твой, соловей,
Даже в самом сне глубоко
Внятен был душе моей.

Г.Державин (нет звука - р)

ԼԵԳԵՆԴ – (լատ. legenda – այն, ինչ պետք է կարդացվի). բանահյուսությունում արձակ ավանդական գրույց, որի մեջ պատկերվող կերպարներն ու դեպքերը ներկայացվում են մեծ մասամբ հրաշապատում ձևով: Լեգենդների մեջ արտահայտվել են ժողովրդի սոցիալական երազանքներն ու ըմբռնումները:

ԼԵՅՄՈՏԻՎ – (գերմ. leitmotiv – գլխավոր մոտիվ). գեղարվեստական երկի հիմնական գաղափարը, իմաստը, որը տարբեր ձևերով ու միջոցներով կրկնվում և ընդգծվում է ամբողջ ստեղծագործության մեջ:

ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ – գրականության ժանրերից մեկը՝ գիրք, որի մեջ ժամանակագրական կարգով գրի են առնված պատմական դեպքերի հաջորդական նկարագրություն: Հին միջնադարյան գրականության մեջ հայտնի են Մատթեոս Ուռհայեցու (XII դ.), Սամվել Անեցու (XII դ.), Մխիթար Այրիվանեցու (XII դ.) և ուրիշների տարեգրությունները:

ԼԻՊՈԳՐԱՄԱ – (հուն. leipo – հրաժարվում եմ, gramma – տառ). առանց մեկ կամ մի քանի հնչյունի օգտագործման գրված տեքստ:

Թար նագամին, թար կուխնոս, թար կուլա,
Թար աք ձեռին, թար սիրտ խոցող թար գուլլա,
Թար ծախ ձեռքին, թար զինով լի, թար կուլա,
Թար արևը, թար կու ցուլա, վարդին՝ շանգ:
Մայաթ-Եովա (չկա - բ, պ, փ, ֆ, մ)

ЛИРИКА - (греч. lira - струнный музыкальный инструмент, под звуки которого исполнялись песни-стихотворения): один из трех родов литературы, выражающий мысли, чувства и переживания субъекта, провоцирующий у читателя иллюзию сопереживания и тяготеющий к стиховой форме. В отличие от эпоса и драмы, в которых изображаются законченные характеры, действующие в различных обстоятельствах, лирика рисует отдельные состояния характера в определенный момент жизни.

ЛИРИЧЕСКИЙ ГЕРОЙ - (термин Ю. Тынянова): образ героя, переживания, мысли и чувства которого отражены в лирическом произведении. Он отнюдь не идентичен образу автора, хотя и отражает его личные переживания, связанные с теми или иными событиями его жизни, с его отношением к природе, общественной жизни, людям. Своеобразие мироощущения, миропонимания поэта, его интересы, особенности характера находят соответственное выражение в форме, в стиле его произведений.

ԸՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ, ԼԻՐԻԿԱ - (հուն. lira - երաժշտական գործիքի տեսակ). գրական երեք հիմնական բաժիններից՝ սեռերից մեկը: Էպիկական և դրամատիկական սեռերից քնարերգությունը տարբերվում է նրանով, որ այստեղ իրականությունն արտացոլվում է ոչ թե գործողությունների մեջ բնութագրվող կերպարների, այլ անհատի հույզերի, տպավորությունների և խոհերի միջոցով: Բանաստեղծը վերարտադրում և տիպականացնում է անհատի զգացմունքներն ու մտորումները, նրա վերաբերմունքը դեպի իրականության այս կամ այն կողմը: Քնարական բանաստեղծության մեջ ևս հանդես է գալիս որոշակի մարդկային կերպար՝ քնարական հերոս:

ԸՆԱՐԱԿԱՆ ՀԵՐՈՍ - քնարական բանաստեղծությունների մեջ հանդես եկող գրական կերպար, որը բացահայտվում է իր հույզերի, խոհերի և ապրումների միջոցով: Քնարական հերոսի կերպարը շատ հաճախ հանդնկնում է բանաստեղծի անձնավորության հետ, բայց դա նրա կենսագրության տառացի կրկնությունը չէ, այլ գեղարվեստական ընդհանրացում՝ հարստացված երևակայության տարրերով, տվյալ հասարակական կոլեկտիվի մարդկանց բնորոշ զգացմունքներով և մտքերով:

